**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-9/18-1**

ք. Երևան 22 -ը հունվարի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թաղևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***40,128,390 (քառասուն միլիոն հարյուր քսանութ հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն*, բացառությամբ սույն պայմանագրի 61-րդ չափաբաժնի, որի մասով մասնակիցը ԱԱՀ չի վճարում**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային

---

[13] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[16] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[16] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **Ք. Երևան, Արզումանյան 32-10** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան » ՓԲԸ** |
| Հ/Հ 900011144129 | **Հ/Հ 217002182558001** |
| ՀՎՀՀ 02522157 | **ՀՎՀՀ 01210095** |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | **տնօրեն** |
| **Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ** | **Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ** |

*Հավելված N 1*
*N ԳՀԱՊՁԲ-20-9/18-1 պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | Տեխնիկական հատկանիշներ | ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ | ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| 1. | Պրեսիկոնտրոլ Universal 4x3 ml | Լրակազմում 4x3մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | PreciControl Universal Elecsys V2 | Roche Diagnostics |
| 2. | Պրեսիկոնտրոլ Tumor Marker 4x3 ml | Լրակազմում 4x3մլ,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | PreciControl TM Elecsys | Roche Diagnostics |
| 4. | Պրեսիկոնտրոլ Multimarker 6x2ml | Լրակազմում 6x2 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | PreciControl Multimarker Elecsys | Roche Diagnostics |
| 5. | Պրեսիկոնտրոլ HBsAg 16x1.3 ml | Լրակազմում 16x1,3մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | HBsAg G2 PC Elecsys | Roche Diagnostics |
| 6. | Պրեսիկոնտրոլ HIV COMBI 6x2 ml | Լրակազմում 6x2մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | HIV PC Elecsys | Roche Diagnostics |
| 7. | Պրեսիկոնտրոլ HCV 16x1.3 ml | Լրակազմում 16x1,3մլ,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | Anti-HCV PC Elecsys | Roche Diagnostics |
| 8. | Պրեսիկոնտրոլ CMV IGM 16x1 ml | Լրակազմում 16x1մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | CMV IgM PC Elecsys | Roche Diagnostics |
| 9. | Պրեսիկոնտրոլ CMV IGG 16x1 ml | Լրակազմում 16x1մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | CMV IgG PC Elecsys | Roche Diagnostics |
| 10. | Պրեսիկոնտրոլ TOXO IgM 16x0.67 ml | Լրակազմում 16x0,67մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | Toxo IgM PC Elecsys | Roche Diagnostics |
| 11. | Պրեսիկոնտրոլ TOXO IgG 16x1 ml | Լրակազմում 16x1մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | Toxo IgG PC Elecsys | Roche Diagnostics |
| 12. | Պրեսիկոնտրոլ HSV 4x3ml | Լրակազմում 4x3 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | HSV PC Elecsys | Roche Diagnostics |
| 14. | Պրեսիկոնտրոլ Varia 4x3ml | Լրակազմում 4x3 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | PreciControl Varia Elecsys | Roche Diagnostics |
| 15. | Պրեսիկոնտրոլ Thyro AB 4x2ml | Լրակազմում 4x2 մլ քանակի, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | PreciControl Thyro AB Elecsys V2 | Roche Diagnostics |
| 16. | Լուծիչ Multy Assay 2x16 | Լրակազմում 2x16 մլ քանակի, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | Diluent MultiAssay Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 17. | Լուծիչ Universal 2x16 | Լրակազմում 2x16 մլ քանակի, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | Universal Diluent 2x16ml Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 18. | ProCell 2x2 l | Լրակազմում 2x2 լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | ProCell M 2x2 L Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 19. | CleanCell 2x2 l | Լրակազմում 2x2 լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | CleanCell M 2x2 L Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 20. | PreClean M 5x600 ml | Լրակազմում 5x600 մլ քանակի, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | PreClean M Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 21. | ProbeWash M 12x70 ml | Լրակազմում 12x70 մլ քանակի, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | Probe Wash M Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 23. | SysClean Adapter 2 pcs. | Լրակազմում 2 հատ | SYSCLEAN-ADAPTER M | Roche Diagnostics |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 25. | Պրոսել, 6 x 380 ml | [illegible] փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | ProCell Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 26. | Կլինսել, 6 x 380 ml | Լրակազմում 6հատ 380 մլ շիշ,15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | CleanCell Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 27. | Սիսվոշ, 1 x 500 ml | 1հատ 500 մլ շիշ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | Sys Wash Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 28. | Սիսկլին, 5 x 100 ml | Լրակազմում 5հատ 100 մլ շիշ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | ISE cleaning solution Sys Clean | Roche Diagnostics |
| 32. | Pinch valve tubing սիլիկոնե խողովակ | սիլիկոնե խողովակ Pinch valve tubing, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | TUBE SET IH (TUBE FOR PINCH (2PCS. / 180 MM)) | Roche Diagnostics |
| 33. | Չափիչ բջջիջ | Նախատեսված է e 411 և e 601 անալիզատորների համար, գործարանային փաթեթավորումով | MEASURING CELL WITH REF. ELECT. V7.0 | Roche Diagnostics |
| 34. | Cell Check350 թեսթ | Նախատեսված է e 411 և e 601 անալիզատորների համար, գործարանային փաթեթավորումով | Cell Check Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 35. | Blank cell | Նախատեսված է e 411 և e 601 անալիզատորների համար, գործարանային փաթեթավորումով | BlankCell Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 36. | SAP | Նախատեսված է e 411 և e 601 անալիզատորների համար, գործարանային փաթեթավորումով | SAP Test Elecsys,cobas e | Roche Diagnostics |
| 37. | Հեպատիտ C 1X50 | Նախատեսված LightCycler անալիզատորների համար; Լրակազմում՝ 50 տեստ; պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C տիրույթում; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, գործարանային փաթեթավորմամբ: | GeneProof Hepatitis C Virus (HCV) PCR Kit | GeneProof |
| 38. | Հեպատիտ B 1X50 | Նախատեսված LightCycler անալիզատորների համար; Լրակազմում՝ 50 տեստ; պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C տիրույթում; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, գործարանային փաթեթավորմամբ: | GeneProof Hepatitis B Virus (HBV) PCR Kit | GeneProof |
| 40. | Քլամիդիա տրախոմատիս 1X50 | Նախատեսված LightCycler անալիզատորների համար; Լրակազմում՝ 50 տեստ; Քսուկը վերցնել չոր միջավայրում :պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C տիրույթում; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, գործարանային փաթեթավորմամբ: | GeneProof Chlamydia trachomatis PCR Kit | GeneProof |
| 41. | Հերպես HSV( 1+2) 1X50 | Նախատեսված LightCycler անալիզատորների համար; ֆորմատ՝ Լրակազմում '50 տեստ, Քսուկը վերցնել չոր միջավայրում :պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, գործարանային փաթեթավորմամբ: | GeneProof Herpes Simplex Virus (HSV-1/2) PCR Kit | GeneProof |
| 42. | Միկոպլազմա պնևմոնիա 1X50 | Նախատեսված LC Nano անալիզատորի համար; Լրակազմում" 50 տեստ, պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C տիրույթում; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, գործարանային փաթեթավորմամբ: | GeneProof Mycoplasma pneumoniae PCR Kit | GeneProof |
| 43. | Խլամիդիա պնեւմոնիա 1X50 | Նախատեսված LC Nano անալիզատորի համար;Լրակազմում" 50 տեստ; պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C տիրույթում; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, գործարանային փաթեթավորմամբ: | GeneProof Chlamydia pneumoniae PCR Kit | GeneProof |
| 44. | Պապիլոմա վիրուս HPV V16-18 1X25 | Նախատեսված LightCycler անալիզատորների համար; Լրակազմում՝ 25 տեստ; պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C տիրույթում; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); | HPV 16&18 Real Time PCR Kit | Liferiver (Shanghai ZJ Bio- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, գործարանային փաթեթավորմամբ: | | Tech Co., Ltd |
| 51. | 8-Tube strip &cup 120 (10x12) | Նախատեսված LC Nano անալիզատորի համար՝ Լրակազմում՝10x12 հատ | LightCycler 8-Tube Strips (clear) | Roche Diagnostics |
| 52. | pocH-pack 65 XL ռեագենտ | Նախատեսված է poch 100i անալիզատորի համար, լրակազմում՝ 9 լ լուծիչ և 185 մլ լիզիս ռեագենտ մեկ տուփում, հետազոտվող նմուշը՝ երակային արյուն, 15-25 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ, | POCH-PACK 65xL 9.0L+185ML | Sysmex |
| 53. | Ստրոմատոլյզեր STM-WH | 3x500 մլ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ,նախատեսված է XP 300 հեմատոլոգիական անալիզատորի համար: | STROMATOLYSER-WH 3x500ML | Sysmex |
| 54. | Ստրոմատոլյզեր FB 5L | 5լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ,նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար: | STROMATOLYSER-FB 5L | Sysmex |
| 55. | Ստրոմատոլյզեր - 4DL 5L | 5լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ,նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար: | STROMATOLYSER-4DL 5L | Sysmex |
| 56. | Ստրոմատոլյզեր - 4DS 42ml | 42մլ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով, նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար: | STROMATOLYZER-4DS 1 x 42ML | Sysmex |
| 57. | Սուլֆոլյզեր 500ml | 500 մլ, XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար:15-25 C աստիճան ջերմային ռեժիմ | SULFOLYSER 1 x 500ML | Sysmex |
| 58. | Ռետսերչ II 1L+12ml | Լրակազմում՝ 1լ+12 մլ քանակի, XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար:15-25 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով | RETSEARCH(II) 1L + 12ML | Sysmex |
| 59. | Cellclean լվացող հեղուկ | cellclean 50մլ տարողությամբ, նախատեսված Sysmex հեմատոլոգիական սարքերի համար, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով | Cellclean 50 ML | Sysmex |
| 61. | Վակումային պլաստիկ Փորձանոթներ ԷՆԱ համար 2մլ-ոց (0.4մլ Na citricum պարունակությամբ) | 2մլ ծավալով / 0,4մլ Na citricum-ի պարունակությամբ/, KIMASED շտատիվի համար, N100 քանակի փաթեթավորումով տուփ, գամմա ճառագայթներով ստերիլիզացիայի սերտիֆիկացում, | STERILE KIMASED plastic vacuum tubes | Vacutest Kima Group |
| 62. | Cellpack 10 L ռեագենտ | Cellpack 10 լիտր տարողությամբ,KX-21 և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով | CELLPACK 10L | Sysmex |
| 63. | Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) L; 4.5 մլ | 4.5 մլ քանակի,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումով | E-CHECK (XE) L; 4.5ML; L1 | Sysmex |
| 64. | Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) N; 4.5 մլ | 4.5 մլ քանակի, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումով | E-CHECK (XE) N; 4.5ML; L2 | Sysmex |
| 65. | Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) H; 4.5 մլ | 4.5 մլ քանակի, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումով | E-CHECK (XE) H; 4.5ML; L3 | Sysmex |
| 66. | Պրո-GRP CS կալիբրատոր | Լրակազմում 4x1 մլ,2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | proGRP CS Elecsys | Roche Diagnostics |
| 67. | Հակամյուլերային հորմոն CS | Լրակազմում 4x1 մլ քանակի,2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | AMH CS Elecsys | Roche Diagnostics |
| 68. | HE4 CS | Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: | HE4 CS Elecsys | Roche Diagnostics |
| 69. | Ցիտոմեգալովիրուս 1X50LC Nano | Նախատեսված LC Nano անալիզատորի համար; Լրակազմում ՝ 50 տեստ; պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C, նախատեսված է in-vitro ախտորոշման համար; պարունակում է նուկլեինաթթուների էքստրակցիայի և ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ; | GeneProof Cytomegalovirus (CMV) PCR Kit | GeneProof |
| 71. | Հակաբիոտիկի դիսկ N50 | հակաբիոտիկային դիսկ, լրակազմում `50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, | Ciprofloxacin | Liofilchem |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ցիպրոֆլոքսացին: | գործարանային փաթեթավորումով տուփ | | |
| 72. | Հակաբիոտիկի դիսկ N50 Ռոցեֆին Ceftriaxone | հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ | Ceftriaxone | Liofilchem |
| 73. | Հակաբիոտիկի դիսկ N50 Զինացեֆ Cefuroxime | հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ | cefuroxime | Liofilchem |
| 74. | Հակաբիոտիկի դիսկ N50 Մերկացին Amikacin | հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ | Amikacin | Liofilchem |
| 75. | Հակաբիոտիկի դիսկ N50 Գենտամիցին | հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ | Gentamycin | Liofilchem |
| 76. | Հակաբիոտիկի դիսկ N50 Էրիտրոմիցին | հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ | Erythromycin | Liofichem |
| 77. | Հակաբիոտիկի դիսկ N50 Լինկոմիցին | հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ | Lincomycin | Liofilchem |

***Ապրանքները պետք է ունենան.*** Գրանցված երկրներից՝ Եվրամիության և /կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և /կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

1. Եվրամիության և /կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և /կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):
2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):
3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
4. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:
5. Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

***թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ**

6. Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**
տնօրեն

**Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պրեսիկոնտրոլ Universal 4X3 ml | լրակազմ | 4 | 30,180 | 120,720 |
| 2. | Պրեսիկոնտրոլ Tumor Marker 4X3 ml | լրակազմ | 2 | 55,080 | 110,160 |
| 4. | Պրեսիկոնտրոլ Multimarker 6X2ml | լրակազմ | 2 | 86,700 | 173,400 |
| 5. | Պրեսիկոնտրոլ HBsAg 16X1.3 ml | լրակազմ | 2 | 54,210 | 108,420 |
| 6. | Պրեսիկոնտրոլ HIV COMBI 6X2 ml | լրակազմ | 2 | 72,450 | 144,900 |
| 7. | Պրեսիկոնտրոլ HCV 16X1.3 ml | լրակազմ | 2 | 150,910 | 301,820 |
| 8. | Պրեսիկոնտրոլ CMV IGM 16X1 ml | լրակազմ | 1 | 62,040 | 62,040 |
| 9. | Պրեսիկոնտրոլ CMV IGG 16X1 ml | լրակազմ | 1 | 62,040 | 62,040 |
| 10. | Պրեսիկոնտրոլ TOXO IgM 16X0.67 ml | լրակազմ | 1 | 65,440 | 65,440 |
| 11. | Պրեսիկոնտրոլ TOXO IgG 16X1 ml | լրակազմ | 1 | 65,440 | 65,440 |
| 12. | Պրեսիկոնտրոլ HSV 4X3ml | լրակազմ | 1 | 131,940 | 131,940 |
| 14. | Պրեսիկոնտրոլ Varia 4X3ml | լրակազմ | 2 | 72,000 | 144,000 |
| 15. | Պրեսիկոնտրոլ Thyro AB 4X2ml | լրակազմ | 2 | 81,990 | 163,980 |
| 16. | Լուծիչ Multy Assay 2X16 | լրակազմ | 4 | 39,310 | 157,240 |
| 17. | Լուծիչ Universal 2X16 | լրակազմ | 10 | 15,990 | 159,900 |
| 18. | ProCell 2x2 l. | լրակազմ | 10 | 52,990 | 529,900 |
| 19. | CleanCell 2x2 l | լրակազմ | 10 | 52,990 | 529,900 |
| 20. | PreClean M 5x600 ml | լրակազմ | 10 | 43,990 | 439,900 |
| 21. | ProbeWash M 12x70 ml | լրակազմ | 2 | 33,990 | 67,980 |
| 23. | SysClean Adapter 2 pcs. | լրակազմ | 1 | 4,810 | 4,810 |
| 25. | Պրոսել, 6 X380 ml | լրակազմ | 10 | 24,000 | 240,000 |
| 26. | Կլինսել, 6 X 380 ml | լրակազմ | 10 | 24,000 | 240,000 |
| 27. | Սիսվոշ, 1 X500 ml | հատ | 10 | 4,990 | 49,900 |
| 28. | Սիսկլին, 5 X 100 ml | լրակազմ | 1 | 20,480 | 20,480 |
| 32. | Pinch valve tubing սիլիկոնե խողովակ | հատ | 4 | 19,990 | 79,960 |
| 33. | Չափիչ բջիջ | հատ | 2 | 1,249,990 | 2,499,980 |
| 34. | Cell Check350 թեսթ | լրակազմ | 2 | 6,000 | 12,000 |
| 35. | Blank cell | լրակազմ | 2 | 7,990 | 15,980 |
| 36. | SAP | լրակազմ | 2 | 21,990 | 43,980 |
| 37. | Հեպատիտ C 1X50 | լրակազմ | 2 | 399,000 | 798,000 |
| 38. | Հեպատիտ B 1X50 | լրակազմ | 2 | 304,500 | 609,000 |
| 40. | Քլամիդիա տրախոմատիս 1X50 | լրակազմ | 1 | 304,500 | 304,500 |
| 41. | Հերպես HSV( 1+2) 1X50 | լրակազմ | 1 | 304,500 | 304,500 |
| 42. | Միկոպլազմա պնևմոնիա 1X50 | լրակազմ | 1 | 304,500 | 304,500 |
| 43. | Խլամիդիա պնեւմոնիա 1X50 | լրակազմ | 1 | 304,500 | 304,500 |
| 44. | Պապիլոմա վիրուս HPV V16-18 1X25 | լրակազմ | 1 | 300,000 | 300,000 |
| 51. | 8-Tube strip &cup 120 (10X12) | լրակազմ | 2 | 95,590 | 191,180 |
| 52. | pocH-pack 65 XL ռեագենտ | լրակազմ | 200 | 46,500 | 9,300,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 53. | Ստրոմատոլայզեր STM-WH | հատ | 8 | 60,000 | 480,000 |
| 54. | Ստրոմատոլայզեր FB 5L | հատ | 8 | 75,000 | 600,000 |
| 55. | Ստրոմատոլայզեր - 4DL 5L | հատ | 8 | 60,000 | 480,000 |
| 56. | Ստրոմատոլայզեր - 4DS 42ml | հատ | 8 | 21,000 | 168,000 |
| 57. | Սուլֆոլայզեր կամ համարժեք500ml | լրակազմ | 5 | 150,000 | 750,000 |
| 58. | Ռետսերչ II 1L+12ml կամ համարժեք | հատ | 60 | 36,000 | 2,160,000 |
| 59. | Cellclean կամ համարժեք լվացող հեղուկ | հատ | 72000 | 109 | 7,848,000 |
| 61. | Վակումային պլաստիկ Փործանոթներ ԷՆԱ համար 2մլ-ոց (0.4մլ Na citricum պարունակությամբ) | հատ | 80 | 15,000 | 1,200,000 |
| 62. | Cellpack 10 L կամ համարժեք ռեագենտ | հատ | 1 | 72,090 | 72,090 |
| 63. | Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml L 4.5 մլ | հատ | 1 | 72,090 | 72,090 |
| 64. | Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml N 4.5 մլ | հատ | 1 | 72,090 | 72,090 |
| 65. | Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml H 4.5 մլ | լրակազմ | 1 | 261,990 | 261,990 |
| 66. | Պրո-GRP CS կալիբրատոր | լրակազմ | 1 | 140,240 | 140,240 |
| 67. | Հակամյուլերային հորմոն CS | լրակազմ | 1 | 30,000 | 30,000 |
| 68. | HE4 CS | լրակազմ | 1 | 304,500 | 304,500 |
| 69. | Ցիտոմեգալովիրուս 1X50LC Nano | լրակազմ | 6 | 1,350 | 8,100 |
| 71. | Հակաբիոտիկի դիսկ N50 Ցիպրոֆլոքսացին | լրակազմ | 3 | 1,350 | 4,050 |
| 72. | Հակաբիոտիկի դիսկ N50 Ռոցեֆին Ceftriaxone | լրակազմ | 3 | 1,350 | 4,050 |
| 73. | Հակաբիոտիկի դիսկ N50 Զինացեֆ Cefuroxime | լրակազմ | 2 | 1,350 | 2,700 |
| 74. | Հակաբիոտիկի դիսկ N50 Մերկացին Amikacin | լրակազմ | 2 | 1,350 | 2,700 |
| 75. | Հակաբիոտիկի դիսկ N50 Գենտամիցին | լրակազմ | 2 | 1,350 | 2,700 |
| 76. | Հակաբիոտիկի դիսկ N50 Էրիտրոմիցին | լրակազմ | 2 | 1,350 | 2,700 |
| 77. | Հակաբիոտիկի դիսկ N50 Լինկոմիցին | լրակազմ | 2 | 1,350 | 2,700 |
| **Ընդամենը** | | | | | **40,128,390** |

***Գնման ժամանակացույցը*** *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**
տնօրեն

Ch Ugh Որոշում AH0337558

**Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/18-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ /Պրեսիկոնտրոլ universal 4x3 ml/ | 33691400/562 | 120,720 |
| 2. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ /Պրեսիկոնտրոլ tumor marker 4x3 ml/ | 33691400/563 | 110,160 |
| 4. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ multimarker 6x2ml/ | 33691400/565 | 173,400 |
| 5. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ hbsag 16x1.3 ml/ | 33691400/566 | 108,420 |
| 6. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ hiv combi 6x2 ml/ | 33691400/567 | 144,900 |
| 7. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ hcv 16x1.3 ml/ | 33691400/568 | 301,820 |
| 8. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ cmv igm 16x1 ml/ | 33691400/569 | 62,040 |
| 9. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ cmv igg 16x1 ml/ | 33691400/570 | 62,040 |
| 10. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ toxo igm 16x0.67 ml/ | 33691400/571 | 65,440 |
| 11. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ toxo igg 16x1 ml/ | 33691400/572 | 65,440 |
| 12. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ hsv 4x3ml/ | 33691400/573 | 131,940 |
| 14. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ varia 4x3ml/ | 33691400/575 | 144,000 |
| 15. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ thyro ab 4x2ml/ | 33691400/576 | 163,980 |
| 16. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Լուծիչ multy assay 2x16/ | 33691400/577 | 157,240 |
| 17. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Լուծիչ universal 2x16/ | 33691400/578 | 159,900 |
| 18. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Procell 2x2 l/ | 33691400/579 | 529,900 |
| 19. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Cleancell 2x2 l/ | 33691400/580 | 529,900 |
| 20. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Preclean m 5x600 ml/ | 33691400/581 | 439,900 |
| 21. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Probewash m 12x70 ml/ | 33691400/582 | 67,980 |
| 23. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Sysclean adapter 2 pcs./ | 33691400/584 | 4,810 |
| 25. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրոսել, 6 x380 ml/ | 33691400/586 | 240,000 |
| 26. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կլինսել, 6 x 380 ml/ | 33691400/587 | 240,000 |
| 27. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)/Սիսվոշ, 1 x500 ml/ | 33691400/588 | 49,900 |
| 28. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Սիսկլին, 5 x 100 ml/ | 33691400/589 | 20,480 |
| 32. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)/Pinch valve tubing սիլիկոնե խողովակ/ | 33691160/551 | 79,960 |
| 33. | Բժշկական այլ գործիքներ և պարագաներ/Չափիչ բջիջ/ | 33141211/550 | 2,499,980 |
| 34. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Cell check350 թեսթ/ | 33691400/592 | 12,000 |
| 35. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Blank cell/ | 33691400/593 | 15,980 |
| 36. | Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Sap/ | 33691400/594 | 43,980 |
| 37. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հեպատիտ c 1x50/ | 33691423/802 | 798,000 |
| 38. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հեպատիտ b 1x50/ | 33691423/803 | 609,000 |
| 40. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Քլամիդիա տրախոմատիս 1x50/ | 33691423/805 | 304,500 |
| 41. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հերպես hsv( 1+2) 1x50/ | 33691423/806 | 304,500 |
| 42. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Միկոպլազմա պնևմոնիա 1x50/ | 33691423/807 | 304,500 |
| 43. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Խլամիդիա պնևմոնիա 1x50/ | 33691423/808 | 304,500 |
| 44. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պապիլոմա վիրուս hpv v16-18 1x25/ | 33691423/809 | 300,000 |
| 51. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/8-tube strip &cup 120 (10x12)/ | 33691423/812 | 191,180 |

| | | | |
|---|---|---|---|
| 52. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Poch-pack 65 xl ռեագենտ/ | 33691400/595 | 9,300,000 |
| 53. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Ստրոմատոլայզեր stm-wh/ | 33691162/679 | 6,300,000 |
| 54. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Ստրոմատոլայզեր fb 5l/ | 33691162/680 | 480,000 |
| 55. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Ստրոմատոլայզեր - 4dl 5l/ | 33691162/681 | 600,000 |
| 56. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ստրոմատոլայզեր - 4ds 42ml/ | 33691160/552 | 480,000 |
| 57. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Սուլֆոլայզեր կամ համարժեք500ml/ | 33691160/553 | 168,000 |
| 58. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ռետսերչ ii 1l+12ml կամ համարժեք/ | 33691400/596 | 750,000 |
| 59. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Cellclean կամ համարժեք լվացող հեղուկ/ | 33691160/554 | 2,160,000 |
| 61. | **Փորձանոթներ**/Վակումային պլաստիկ փորձանոթներ էնա համար 2մլ-ոց (0.4մլ na citricum պարունակությամբ)/ | 33191310/521 | 7,848,000 |
| 62. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Cellpack 10 l կամ համարժեք ռեագենտ/ | 33691160/559 | 1,200,000 |
| 63. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ստուգիչ հեղուկ xt 4000-ի e-check (xe) 4.5ml l 4.5 մլ/ | 33691160/600 | 72,090 |
| 64. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ստուգիչ հեղուկ xt 4000-ի e-check (xe) 4.5ml n 4.5 մլ/ | 33691160/601 | 72,090 |
| 65. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ստուգիչ հեղուկ xt 4000-ի e-check (xe) 4.5ml h 4.5 մլ/ | 33691160/602 | 72,090 |
| 66. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Պրո-grp cs կալիբրատոր/ | 33691423/883 | 261,990 |
| 67. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակամյուլերային հորմոն cs/ | 33691423/884 | 140,240 |
| 68. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/He4 cs/ | 33691423/885 | 30,000 |
| 69. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ցիտոմեգալովիրուս 1x50lc nano/ | 33691423/886 | 304,500 |
| 71. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Ցիպրոֆլոքսացին/ | 33691423/888 | 8,100 |
| 72. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Ռոցեֆին Ceftriaxone/ | 33691423/889 | 4,050 |
| 73. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Զինացեֆ Cefuroxime/ | 33691423/890 | 4,050 |
| 74. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Մերկացին Amikacin/ | 33691423/891 | 2,700 |
| 75. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Գենտամիցին/ | 33691423/892 | 2,700 |
| 76. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Էրիտրոմիցին/ | 33691423/893 | 2,700 |
| 77. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հակաբիոտիկի դիսկ N50 Լինկոմիցին | 33691423/894 | 2,700 |
| **Ընդամենը** | | | **40,128,390** |

***Վճարման ժամանակացույց*** *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**

տնօրեն

**Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**Հավելված N 3**
**N ԳՀԱՊՁԲ-20-9/18-1 ծածկագրով պայմանագրի**

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «            » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 3.1**
**N ԳՀԱՊՁԲ-20-9/18-1 ծածկագրով պայմանագրի**

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն